

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 29

15 ՅՈՒԼԻՍ 1900

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Տարեկան հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէ, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխաւառներուն ու Պահչե-Գաբուի ջրալանտներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրալանտներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԻ

درعليه ده غلطه ده «مسیس» غزنه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստուկեան Խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Բ Ա Ր Զ Ր Ա Գ Ո Յ Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն
Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Վարժարանիս առաջիկայ տարեցոյանը կը սկսի սեպտեմբեր 4ին (Ը. Ե.) երեքշաբթի առտու : Տարեքուսակն է տասնըվեց (16) Օսմ. ոսկի . 8 ոսկին Սեպտեմբերի եւ միւս 8 ոսկին Փետրվարի սկիզբը վճարելի :

Տնօրէնութիւնը ամէն շաբթ եւ խնամք կը ցանկ վարժարանս ամէն կերպով գոհացուցիչ եւ բարեկարգ վիճակի մէջ պահելու համար :

Արդեւ իսկ գտնուած կարող ուսուցիչներու ծանօթ խաւմբին վրայ աւելցուած է Մինաս Էֆ. Ծալեան : Մանուկ Էֆ. Թադէոսեան եւս պիտի ստանանք գեղագրութեան ու գծագրութեան դասեր , իբրեւ մասնագէտ սուսուցիչ այդ նիւղերուն :

Տիկին Զեմայրս անձամբ պիտի հսկէ մասնաւորաբար փոքրիկներուն վրայ : Բոլոր աւակներսնեւն արդեւ կը գտնուին վարժարանին բժիշկին անմիջական հսկողութեանը տակ :

Նոր աւակներսնեւն արձանագրութեան համար ծնողները կամ խնամակալները կը հրաւիրուին անյապաղ դիմել վարժարանին Տնօրէն Տր. Զեմայրսի (Պարսիզակ) որմէ կարելի է ստանալ պէտք եղած ամէն տեղեկութիւն , եւ կամ Մր. Փիթի , Պալպըլ-Հաւուզ , Կ. Պոլիս :

3—10

“ԱԼԼԷԱՆՁԱ”

ԱՊՈՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԳՐԱՄԱԳԼՈՒԹ ԵՒ ԵՐԱՇԽԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն , եւ որոշ պայմանաժամերով , օժիտի , զկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու , հետեւեալ առաւելութիւնները ընծայելով .

Մէկ տարուան ապահովագրութենէ ետքը , երբէք ապահովագիրները (քոյիս) չեն ջնջուիր , մենամարտն ու անձնապահութիւնը կ'երաշխաւորուին , բնաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելուածական ապահովագին (քոյիւ) չի պահանջուիր , ապահովագիրներու վճարումը դադրելու պարագային՝ ապահովագիրը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին , ապահովագրի ծախք չառնուիր , ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրուողը :

Արկածեալներու դէմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ .

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի , ձիու , կառքի , թրամուէյի , արկաթուղիի , շողենաւի , առագաստահաւի , միջատներու խայթուածքի եւ ապահովագրուողին արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ :

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը , ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած :

Ընկերութեան պանքան է՝ ԲՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս , Հաճօրույօ խան , թիւ 53, 54, 55, 56

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաշխաւորութեան գումար աւելի քան 175,000,000 ֆրանք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻԶՔ ԷՏՈՒԸՐՏՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալալըմնի խան , Մէյսանըզ փողոց , Կ. Պոլիս :

ՄԱՍԻՆ

49րդ ՏԱՐԻ

— 15 ՅՈՒԼԻՍ 1900 —

ԹԻԻ 29

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատմական եօթեր Գարակեօմրիկի եկեղեցիին վրայ Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ. — Մասիսի հարցարանին շուրջը. ԱՐՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. — Այցելութիւն մը «Պատիկ Արմաշ»ի աւերակներուն. ՄԷՐԱՏԵՃՍ. — Բանաստեղծութիւններ. Աղջիկն ու պրեւար. ԱԼՓԱՍԼԱՆ. — Գոհար գաղտնիք. Մ. Ո. — Ժողովրդային շեզուն. Ժանտախտն ու կրողը ՅՈՎԷ. ԳԱԶՆՃԵԱՆ. — Կեանքի պատկերներ. Վերջին տեղը. ԹԼԿԱՏԻՆՅԻՆ. — Արեւ. Մամուլ եւ Մասիս. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԳԱՐԱԿԵՕՄՐԻԿԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՐԱՅ

— — — — —

Գարակեօմրիկի հրդեհին առթիւ, որ մօտիկ դարձուց Ս. Յովնան Ոսկերերան եկեղեցին, Իւրիճեան Կարապետ Է. Ին ղիւնցիք՝ այդ ժողովրդական հին ուխտատեղիին հիմնարկութեան վրայ ճշգրիտ և մանրամասն ծանօթութիւններ ունենալու համար, Մասիսի յարգելի արտօնատերը յօժարեցաւ «իր յիշողութեան մօրն խորշերէն քաղելով» լրկել մեզ տոյն յօղուածը որ իր շահեկանութիւնը ունի այս տխուր աշխարհի բնական առթիւ: Մեր համակրելի աշխատակիցն ալ, Մերսեոսեան, այցելելով «Պատիկ Արմաշ»ի աւերակները, զրի առած է իր տպագրութիւնները, զորս նոյնպէս կը հրատարակենք ներկայ թիւով:

Գարակեօմրիկի եկեղեցին եօթանասուն տարուան հաստատութիւն մ'էր, — ի սկզբանէ՝ պարզ խրճիթի (գոշիպէ) նման շէնք մը. շուրջը գտնուած 15-20 տուն եւ մօտակայ Մալթա-Օտաւարին 10-15 տուն հայ բնակիչներուն հոգեւոր մխիթարութեան յատկացած՝ Պալատ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն հովանաւորութեան ներքեւ, իրրեւ անոր մէկ մասունքը: Մէջի զարդերը, պատկերները, կահերն ու կարասիները, որչափ որ կը յիշեմ, Պալատ եկեղեցիին արուած էին:

Հռչակաւոր Խնդրակատարին հրաշագործ պատկերը, որով քիչ ժամանակի մէջ փայլ առաւ այդ խեղճուկ մասունքը եւ նշանաւոր ուխտատեղի մ'եղաւ Պատիկ Արմաշ (*) անունով, Պալատ եկեղեցիին վերնատան մէկ մութ անկիւնը կախուած էր՝ առանց բնաւ

ուշադրութիւն հրաւիրելու. բայց Գարակեօմրիկի փոխադրութիւն ետեւ իրեն ընծայուած յարգն ու պատիւը՝ կարծես վարձատրեց իւր հրաշագործ զօրութեամբ:

Մէջը պաշտօն կատարող քահանաներն ու դպիրները Պալատ եկեղեցիէն կ'երթային:

1834-35ին, երբ Պալատ եկեղեցին կը վերաշինուէր, ես ալ ամէն շաբաթ իրիկուն եւ կիրակի առաւօտ, ինչպէս նաեւ տօնական օրեր, Պալատէն Գարակեօմրիկ կ'երթայի դպրութիւն ընելու քանի մը դպրոցակից ընկերներու հետ:

Ի սկզբան կարեւորութիւն չունէր այդ մասունքը, բայց երբ հրաշագործութեան համբաւը ծաւալելով ուխտատեղի եղաւ եւ ամէն կողմէ յորդառատ նուէրներ տեղալ սկսան, ջերմեանդ մատակարարներու կամ եկեղեցւորներու բուն մրցում մը սկսաւ եւ շարունակեց մինչեւ որ մատուռն եկեղեցիի վերա-

(*) Կանայք «Արմաշի Զարխափանին պատի քոյրը» կը կոչէին:

ծուելէ քանի տարիներ ետքը, Պալաթու ե-
կեղեցիէն բաժնուեցաւ Սալմաթմարուքի թաղն
ալ ի միասին, շնորհիւ քանի մը հոգեւոր ան-
ձերու, որք ուստած էին մինչեւ ց'մահ անձ-
նութիւնը ծառայել ինքրակաւարին, եւ
ծառայեցին մինչեւ 1887, առանց դանկ մ'ա-
ւելցընելու տարեկան 7-800 լիւր հասոյթէն,
որուն կէսը լիապէս կը բաւէր եկեղեցւոյն եւ
ողորմակի դպրոցին ծախքերուն:

Յիշեալ մեծահաւատ մատակարարները՝
Սալմաթմարուքի թաղին մէջ մեծ ազգեցու-
թիւն ձեռք բերելով (շնորհիւ եկեղեցւոյ հա-
սոյթներուն), նախանձորդներ յարուցած էին
բնականաբար, որով քանի մը կուսակցու-
թիւններ կազմուելով, չորս տարին անգամ
մը, նոր թաղ. խորհուրդի ընտրութեան առ-
թիւ, վէճեր, կռիւներ անպակտ էին: Գործն
այն վիճակին հասաւ որ Վարչութիւնն հար-
կադրեցաւ առժամեայ մատակարարներ կար-
գել իւր կողմէ, բայց անոնք ալ չի կրցին
գլուխ ելնել, եւ կը հարկադրուէին հրաժա-
րիւ վերայիշեալ բարեպաշտ անձնութիւններուն
գործիք եղող կուսակցութեանց հակառակու-
թիւններէն նեղուելով:

Վարչութիւնն ալ հանգիստ չէր թաղուեր:
Յաճախ հանրագրութիւններ, երբեմն ալ
պատգամաւորութիւններ կը ներկայանային
եւ թաղ. խորհուրդի օրինաւոր ընտրութիւն
կը պահանջէին:

1887ին, առժամանակեայ մատակարար-
ները նորէն հրաժարելով, Վարչութիւնը (Յա-
րութիւն Պատրիարքի օրով) դիմաւ վերջապէս
թաղեցւոյ թախանձանքին, եւ քուէարկու-
թեամբ թաղ. խորհուրդի ընտրութիւն կատա-
րել տալ որոշելով, գործադրութիւնն ինձի
յանձնեց. դժուարին պաշտօն մը, որ քանի
մը շարաթ զիս գրաւեցուց, բայց դարձեալ
չի յաջողեցաւ: Թաղին ժողովուրդը, Պալաթ
ամէնէն աղէտ, ամէնէն ուամիկ ժողովուրդն
էր, որոցմէ չատերն հաղիւ տարին մէկ-երկու
անգամ ոտք կը կոխէին եկեղեցին: Նուիրա-
տութիւնն բառն անձանթ էր այդ ժողո-
վուրդին. «Քրիստէ պիզէ մահիւթած տէյիլ,
օ պիզէ վէրսին» կ'ըսէին:

Մեծ դժուարութեամբ ընտրողական ժողով
մը կազմեցի երեք կուսակցութեանց պարա-

զլութներէն, որք իրարու դէմ տկուայ կը
կրճատէին եւ իւրաքանչիւրն իւր հետեւորդ-
ներն ունէր խաժամուածին մէջ: Մեծ դժուա-
րութիւն քաշեցի՝ քուէարկութիւնն առանց
ազմուկի եւ կռիւի խաղաղութեամբ կատարել
տալու համար. բայց ինչ քուէարկութիւն:
Ընտրողներուն ամենամեծ մասը կարգաւ զրել
չի գիտնալով, երեք կուսակցութեան կողմէ
պատրաստուած քուէներով ներկայացրի էին
առանց իսկ ճանչելու իրենց ընտրած անձին-
քը, ինչպէս որ ստուգեցի խնամով: Բերում
երեք չորս հարիւր քուէներն՝ երեք տեսակ
գիրով գրուած էին, եւ կը բաշխուէին մօ-
տակայ սրճարաններուն ու փողոցներուն մէջ՝
աղմուկով, աղաղակով եւ մինչեւ իսկ կռի-
ւով: Շատեր եկան գանդատեցան թէ իրենց
ձեռքի քուէթուղթերը եկեղեցիին մօտ հա-
կառակ կուսակցութեան մարդիկն յափշտա-
կելով կամ կորզելով ուրիշ քուէթուղթեր
տուեր էին բռնութեամբ:

Վերջապէս փորձով լիապէս համազուեցայ
թէ քուէարկութեամբ թաղ. խորհուրդ ընտ-
րել՝ ոչ միայն անհնարին, այլ եւ անտեղի էր
այդ եկեղեցիին համար:

Տեղեկագիր մը գրեցի Վարչութեան, եւ
իրաց վիճակն հասկըցընելէ ետեւ՝ առաջար-
կեցի:

Ա. — Սալմաթմարուքի թաղն՝ ըստ առաջ-
նոյն Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցիին
կապել, որով յիշեալ թաղին ժողովուրդը
Գարակէօմրիւկի եկեղեցւոյն վրայ ստանձու-
թիւնն ընելէ կը դադրէր:

Բ. — Գարակէօմրիւկի թաղն եւ մօտակայ
Մալթա Օտաւարն հազիւ 30-40 տուն աղքատ
բնակիչ ունենալով, որք թաղ. խորհուրդ
կազմուելու անկարող էին, միւս կողմէ եկեղե-
ցիին բովանդակ հասոյթը մայրաքաղաքիս
ամէն կողմերէն հոն գլխով ուխտաւորներուն
առատաձեռն նուիրատուութեանց արգիւնքն
ըլլալով եւ թաղեցին բնաւ մասն չունենալով,
Վարչութիւնն ինք պէտք էր ստանձնէր յիշ-
եալ եկեղեցւոյն մատակարարութիւնը յատուկ
խնամակալութեան մը ձեռամբ, ինչպէս որ
ըրած էր Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեց-
ւոյն համար:

Գ. — Յիշեալ եկեղեցւոյ հասոյթներուն

յաւելուածը , որ քանի մը հարիւր լիրայի կրնար հասնիլ բարւոք մատակարարութեամբ , յատկացրնել ազգային կարեւոր պէտքի մը , օրինակի համար կղերական վարժարանի մը , որուն պէտքն ամէն ժամանակէ աւելի զգալի եղած էր : Այսպէս , թէ՛ յիշեալ եկեղեցին կ'ազատէր յոսի մատակարարութեան կամ մանաւանդ աւարտութեան ճարակ ըլլալէ , եւ թէ՛ ազգին մէկ ամենակարեւոր պէտքը՝ գոնէ մատամբ կը հոգացուէր :


Սոյն տեղեկագիրս եւ առաջարկութիւններս առաջին ընթերցմամբ վարչութեան կատարեալ հաւանութեանն արժանանալով , ու

բողոեցաւ գործադրել անյապաղ , եւ ամիսը ջովին գործադրեցաւ :

Ինչպէս որ գիտէք , Գարակէօմբիւրկի եկեղեցւոյն հասութից յաւելեալ մասը , որ ի սկզբան քանի մը հարիւր լիրայի կը հասնէր , Արմաշու Դպրեվանքին յատկացած էր , եւ թէպէտ ետքերը , մանաւանդ քանի մը տարիէ ի վեր շատ նուազած էր , բայց դարձեալ փոքր ի շատէ նպաստի աղբիւր մ'էր յիշեալ կարեւոր հաստատութեան համար , որ հիմա բոլորովին կը զրկուի անկէ :

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

“ՄԱՍԻՍԻ” ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՋԸ



Բխրակնի խմբագրութիւնը , գրչի աննկատ շարժումով մը , իր յունիս 27ի թիւով կ'ըսէ թէ , իր թերթին 1898 եւ 1899 չըջաննեալ մէջ իր աշխատակիցները թէ՛ Պոլսէն եւ թէ՛ գաւառէն ընդարձակ ուսումնասիրութեան նիւթ ըրին այն չորս հարցումները , զորս Մասիս իր թիւ 26ով ուսումնասիրութեան իրր նիւթ կ'առաջարկէ «Մասիսի առաջարկ» խորագրին տակ : Եւ Մասիսի այս tardif(°) առաջարկին առթիւ հետաքրքիրները կը հրաւիրէ աչքէ անցընել Բխրակնի նախորդ համարները , ուր անոնք լիտի(°) պիտի գտնեն եւ զեր իրենց հարցասիրութիւնը գոհացնելու նիւթեր : Ու , իրրեւ վերջարան , կ'աւելցրնէ . «Սպասենք տեսնելու համար թէ արդէն ըսուածներէն տարրեր բաներ մը երեւան պիտի գան այս նիւթին վրայ : Բայց պէտք չէ որ մոռացութեան թողուի արդէն կատարուած աշխատութիւն մը : » Որովհետեւ այս գրութեան շեշտը Մասիսի ձեռնարկին վեասակար ու réactif ըլլալու անբացատրելի նպատակ մը կը մատնէ , ինքզինքս տրիպուած կը զգամ ընթերցողներուս դիտել տալու թէ .

1.- Բխրակն երբեք , au grand jamais , քննութիւն մը բացած չունի վաղուան գրականութեան վրայ այն ձեւով որով կը ձեռնարկէ բանալ այսօր Մասիս :

2. Իր նշանակած թուականներուն Բխրակն առաջին անգամ ու միմիայն ինք հրատարակած է զանազան յօդուածներ , Պոլսահայ գրականութեան իսկական նշանակութեան՝ ու գաւառականին ազագոյց ընդարձակ կոչումին վրայ , ու Պոլսահայ ո՛չ մէկ գրող իր կարծիքը յայտնած է այս մասին : Երկու տարւոյ միջոցում ազգիւրներ միայն գաւառէն բանասիրութեան , ազգագրութեան ու լեզուաբանութեան կարեւորութիւնը երգեցին սովորական ծանօթ եղանակով : Կը յայտարարեմ թէ Բխրակնի խմբագրութիւնը ինք իր կողմէն աշխատութեան մէջ մասնակցութիւն չէ ունեցած ուղղակի , եւ այդ յօդուածները իր թերթին մէջ հրատարակուած տեսնելու բազմէն զատ՝ գործօն դեր մը չենք կրնար ձանջնալ իրեն համար , որով , արդէն կատարուած աշխատութիւն մը մոռացութեան թողուած տեսնելու վսիւր , այսօր , իր հաշուին , բոլորովին անտեղի կը դառնայ :

Խնդիրը ուրիշ տեսակէտէ մը նկատելով , չեմ գիտեր թէ գրական կարեւոր հարցի մը մասին բացուած այս քննութեան առթիւ ճշմարտութիւնը ինքզինքներուն մէջ ինչ օգտակար ու պարկեշտ նպատակ մը կրնայ կենալ Բխրակնին համար , բայց դիտել կու տամ որ , մեր յարուցած խնդիրը երբեք իր կարեւոր

րութիւնը չի կորսնցներ, եւ եթէ կրկնութիւն մըն ալ եղած ըլլար — ինչ որ չէ — ոչ թէ յետամնաց, այլ օգտակար անհրաժեշտ կրկնութիւն մը եղած պիտի ըլլար մեր ըրածը:

Եթէ Բիւրակն բոլորովին անկեղծ է իր զիտողութեան մէջ, այն ատեն իր հասկացողութեան չըջանակէն դուրս մնացած կ'ըլլայ սա մտածումը: Թէ նոր գաղափար մը որպէս զի օգտակար իրականութեան մը յանգի, անհրաժեշտ է որ նուիրագործուի տեսակ մը հասարակաց կարծիքով, ու անոր համար որ եւ է կրկնութիւն, այս կամ այն ձեւի ներքեւ, ոչ թէ յետամնաց, աւելորդ, անօգուտ է, այլ մանաւանդ՝ անհրաժեշտ:

Ցանկալի էր որ Բիւրակնին հրաւիրած

հետաքրքիրներէն ալ այս առիթով իրենց հետաքրքրութեան արդիւնքը ընդհանուրին ծախովութեան ներկայացնողներ գտնուէին:

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ծ. Խ. — Աւելորդ կը սեպենք մեր կողմէ րան մը աւելցնել այս Յայտարարութեան վրայ, որ յստակ կերպով կը հաստատէ արդէն թէ Բիւրակն կամովին կամ՝ ակամայ սխալի մը մէջ ինկած է՝ այնպէս մը հասկըցնել ուզելով իր ընթերցողներուն թէ «Վաղուան Գրականութեան» վրայ Մաւիսի կողմէ մեր գրադէտներուն ուղղւած հարցումը արդէն իսկ այդ թերթին մէջ ծեծուած խնդիր մը եղած ըլլար:

ԳՈՂԱՐ ԳԱՂՏՆՆԵՔ

Գետակին կապոյտ ջուրերուն առջև
Ծոյլ սրբճարան մը կայ խորհրդաւոր
Թաղուած շուքին տակ ծառերուն տըճել:
Ուր կը տանիմ մերք սիրտըս մենաւոր:

Հոտ կը հրստիմ ես, ժամերով հեռուն
Նայուածքս չառած ու մերք գետակին
Վըճիտ բիւրեղին և ալիքներուն՝
Որոնք կը հրծծեն երգ մը՝ վըշտագին:

Եւ իմ հեշտալի մենութեանս ատեն
Երբ վարդ ամպերուն կը ժրպտի հոգիս,
Ճակատս ամբողջ խօշ յուշքեր կը պատեն
Ու սիրտըս կ'ըլլայ յուզուած մէկ հարկիս ...


Թարմ համրոյրէ մը՝ դեռ. նոր ըստացուած՝
Բոց ակնարկներէ, խոստումներէ վերջ,
Օհ ես կը սիրեմ քաղեկ առեղծուած
Կեանքս երազի երանութեանց մէջ:

Եւ կ'երբամ լրուին ու միշտ առանձին
Հոն ուր կը դիմէ հոգին սիրահար.
Ալեակ ու գեփիւռ. ինձ կը նախանձին
Զի մէկուն չի տար սիրտըս իր գոհար:

Մ. Ո.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

ՊԶՏԻԿ ԱՐՄԱՁԻ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒՆ



Փրկւիւած , անձեւի ու ծովսէն սեւցած չորս աղճատ պատեր , կիսակործան գահէթ մը՝ որուն վրայէն խաչը չէ՛ ինկած , քանի մը դուռներ՝ սաճէ պատեաններով միայն կանգուն եւ անոնցմէ ներս անճանաչելի կուտաւ . կում մը քարի ու երկաթի կտորուանքներու , ինչպէս նաեւ աղբիւրի մը մարմարն ու մկըրտութեան աւազան մը . — Աս կը մնայ այսօր Պզտիկ Արմաչէն , Բարակէօմբիւկի Ս. Յովհան Ոսկեբերանէն :

Ու չորս դին անվերջանալի չարք մը աւերակներու , տուներ սրոնցմէ դեռ պատ մը կամ ծխնեկոյզ մը մնացած է , հիմնայատակ եղած , չէնքեր , հսկայ պատեր հոս ու հոն որոնց վրայէն պատուհաններու բացուածքները կմախացած գանկի մը մեռելի նայուածքը կը թարթեն , խանութներ՝ սրոնք այնչափ կեանքերու ապրուստը թաղած են իրենց տակ , վերջապէս բովանդակ արհաւիրտ արդիւնքը անողորմ հրդեհի մը՝ որուն նմանը քիչ անգամ կը տեսնենք Պուլոյ մէջ , ու այրուցքի կծող հոտ մըն ալ՝ զոր անպակաս հով մը հոս հոն կը տարտղնէ մինչեւ Սալմաթմուրք :

Եւ այդ ամէնուն մէջ բոկոտն տղաք , կիսամբիկ կիներ ու մտածկոտ մարդիկ՝ սրոնց խռովուն գէմքին վրայ տակաւին նկարուած է հրդեհին ազդած սոսկումն ու արհաւիրքը , կը պտուտքին մոլորուն քայլերով , աչքերնին գաւաճ յիշատակի կոյտի մը ուր իրենց բովանդակ ունեցածնին կը միայ սըրտերնուն հետ . երբեմն տուն մըն է , պարզուկ , ցածիկ եւ անպաճույճ հիւղակի մը ուր սակայն չառ լաւ կը տրորուէին չորս հինգ հոգի , յաճախ խանութ մը՝ որ դեղին տուտուրով կ'ապրեցնէր մէկ կամ երկու ընտանիք , եւ երբեմն ալ պզտիկ տապալուածք մը՝ որուն հասոյթովը , — ինքնին չառ չնչին , — կը լրացուէր տան պէտք մը եւ կամ պուտ մը պարտք կը գոցուէր :

Յոյս մը չունին այդ մարդիկը՝ այսպէս պտուտելով իրենց երբեմնի բնակարաններուն առջեւ . բան մը չէ մնացած անոնցմէ , նոյն իսկ քանի մը քաջ երկաթեղէն՝ զոր պեղելով հանել ուզէին այդ քարերու , մոխրի եւ աղիւններու կոյտին տակէն . բայց ներքին անգիտակից մղում մը ոչխարի պէս կրկին հոն կը քշէ զանոնք , մղում մը զոր ամէնքս ալ կը զգանք նմանօրինակ պարագաներու մէջ , չուզելով հաւատալ պատահած աղէտի մը եւ անյուստի յոյսը պահելով մեր մէջ թէ անիկա կրնար երազ մը ըլլալ , խարուսիկ ու խռովուն տնուրջ մը՝ հողոված արդէն իր տետուրթեան կարճատեւ շրջանը , Բայց քանի՞ մարդիկը չըջին , իրականութիւնը այնչափ աւերի կը ցցուի իրենց աչքին առջեւ , պարզելով պատկեր մը որ ոչ մէկ քաջալերիչ կողմ ունի եւ ցուցնելով ապագայ մը որուն մէջ ապրուստի եւ բնակարանի կենսական էջերը անորոշ կը մնան Տուները քայքայուած , խանութները կործանած , կարասիները այրած՝ լնցած , աւերակ ամէն կողմ եւ միշտ այդ անվերջանալի անասործ հոտը այրած չէնքերուն՝ որով հովը հրդեհին աւերքի երգը կը հիւսէ :

* * *

Այս ընդհանուր աւերումին մէջէն կ'անցնինք անգամ մը եկեղեցին տեսնելու , քալելով տաք հողի մը վրայէն որ հակառակ ծածկուրթին եւ այդ կողմերու զով քամիներուն , տակաւին գաղջ հեւքով մը կը հեւայ : Տեղ մը վրաններ կանգնուած են , իւրաքանչիւրը չորսէն հինգ ընտանիքի համար , ուրիշ տեղ մը տաանի չափ փայտերով տաղաւար մը շինելու կ'աշխատին ու շուկայի մոլոցին մէջ ամէն մարդ իր խանութը կը պեղէ կտոր մը բան գտնելու յոյսով : Թշուառութեան ամէնէն կենդանի տեսարաններէն մէկն է որ իր

տարբեր երանգներով կը պատկերանայ այդ անճանաչ տարածութեան վրայ ուր հետաքրքիր շատ քիչ կը գտնուի եւ զոր ծածկող մարդիկը ամէնքն ալ զոհերն են աւերիչ հըրդեհին :

Այն այդ հրդեհը . . . : Գիտնալու էք ի՞նչ սարսափունակ տպաւորութիւն մը թողած է տեսնողներուն վրայ , եւ ան ի՞նչ ահաբեկ շեշտեր են զորս ինծի նկարագրող քանի մը կիներ կը դնեն իրենց պատմութեան մէջ : Պզտիկ բոց մը նախ , յետոյ բոցեր չորս կողմէն եւ ահա բոցեղէն ահագին կլաի մը որ իր բացումքին բովանդակ արհաւիրքովը կը յառաջանայ կուլ տալով ճամբուն վրայ ինկածը . բան մը չի թողուր , ոչ մէկ շէնքի կը խնայէ եւ , — ահաբեկ՝ բան , — եկեղեցիին , Աստուածածինին կը հասնի , ինչպէս որ կը պատմեն բարի կիները թաղին : Եւ հոս ամէնէն յուզիչ դրոշմը կը դնեն իրենց նկարագրութեան վրայ ու տենդոտ , սարսափալիտ , առածք մըն է որ դուրս կը թռի իրենց շրթունքներէն : Եկեղեցին՝ հակառակ իր նուիրակներէն , շէնքի մը հանգամանքը ունի իրենց աչքին . ան կրնայ այրիլ , բայց Աստուածածինը , Չարխափանը , օ՛հ ոչ . գերագոյն զրկանքը պիտի ըլլար ատիկա իրենց միամիտ հաւատքին , ու բնաւ չպիտի մոռնային կորուստ մը զոր ինքնին իրօք անդարմանելի պիտի գտնէին , եթէ գովելի նախատեսութեամբ մը առաջը չառնուէր : Եւ այդ գաղափարը թէ Չարխափանը պիտի այրի , սկզբ մը մոռցնել տուեր է հրդեհը , ու բերնէ բերան միակ աղաղակ մը լուեր է բաւական ատեն :

— Չարխափանը կ'երի կոր . . . , Աստուածածինը երեցաւ . . . :

Ու եղբեր են կիներ եւ անոնց հետ քանի մըն ալ մարդ՝ որոնք տուներնին տեղերնին թողած գէսի եկեղեցի վազեր են , չհատալով թէ հրաշագործ պատկեր մը ի՞նչպէս չպիտի կրնար կասեցնել հրդեհ մը , նոյն իսկ ատանկ սոսկալի , ատանկ աւերիչ հրդեհ մը : Եւ այդ վայնասունին չափ ու ժով պոռթկացեր է ուրախութիւնը քիչ մը վերջ , երբ բերնէ բերան տարածուեր է թէ պատկերը ազատած է , անձնուէր ջանքերովը Սեբաստացի

գեղջուկ քահանայի մը , Տ. Արիստակէսին՝ որ իր կեանքը վտանգեր է եկեղեցիին պատկանող ամէն բան ազատելու համար , եւ որ քիչ է մնացեր զոհ երթայ իր անձնուիրութեան : Կը պատմեն թէ եկեղեցիին առաստաղը իջած պահուն ճիշդ տակն է եղբեր , բայց բարեբաղդութեամբ մը առաստաղը կողմնակի փլեր է ու չէ թաղեր իրեն տակ մարդ մը որ արժանի է ամէն վարձատրութեան , եւ որուն մահը այրի մը ու երեք որս պիտի ձգեր մէջտեղ :

— Ինք պատկերը ազատեց , կ'ըսեն տեղացիները , եւ պատկերն ալ զինքը :

Ու պատմութեան այս տեղը յուզիչ դրոշմ մը կը յիշեն — Առաստաղը փլչելուն պէս , ա՛լ ոչ ոք յոյս կ'ունենայ քահանային ազատման մասին եւ դռնէ դուռ սեւ գոյժը կը պտտի թէ Տ. Արիստակէս այրեցաւ եկեղեցիին մէջ : Մահուան լուրերը միշտ արագ կը հասնին : Երէցիկներ կ'իմանայ իսկոյն եւ հերարձակ փողոց կ'իյնայ , ետեւէն ձգած երեք զաւակները որոնք արդէն իսկ սարսափած հրդեհէն՝ կուլան , կը պոռան անընդհատ : Ու չորսը մէկ այգպէս կը հասնին եկեղեցիին փողոցը , ուր սակայն երէցիկներ , փոխանակ ամխոցած սեւ դիակի մը , իր ամուսինն իսկ կը գտնէ ոտքի վրայ , հագուստները այրած , զլուխը փոշելից եւ գէմբը ծուխէն սեւցած . — անճանաչ թէ եւ , բայց վերջապէս նոյն ինքը :

Եւ այս պարագան տեսակ մը հրաշք կը նկատեն թաղեցիք :

* * *

Բաւական տարիներու հնութիւն մըն է այդ Աստուածածնայ պատկերը , հաւանակաւնաբար գաւառացի գաղթականներէ բերուած Պողիս եւ յանձնուած Ղալաթիոյ Ս. Լուսառ լիչ եկեղեցւոյն՝ ուրիշ Գարակէօմբիւի երբեմնի մատուռը փոխադրուեր է , — ինչպէս կը պատմեն տեւադարսը : Բայց Պալաթու Հայերը , նիւթական պարզ պատճառներու համար չուզելով եկեղեցի մըն ալ տեսնել իրենց շուրջ , պատկերը կ'առնեն կը տանին , այսպէսով եկեղեցիի մը հաստատման ծրագիրը ջուրը ձգել ուզելով : Գարակէօմբիւիցի-

ներու հաստատամտութիւնը ամէն արգելքի առաջը կ'առնէ սակայն ու եկեղեցին կը կանգնուի հազարումէկ դժուարութիւններով։ Իսկ պատկերը որ չնքին կառուցումէն առաջ արդէն իսկ ետ առնուած էր, — կը հաստատուի Աւագ Խորանին աջակողմը ուր կը մնար մինչեւ այս վերջին հրդեհը։ Չեմ տեսած զայն, բայց կ'ըսեն թէ շատ աղքեցիկ ու արտայայտիչ հանգամանք մը ունի իր սեւ գիծերով, դարաւոր հնութիւն մը՝ զոր ողորակել Այվազովսքի հազար տարուան հաներ է Պոլիս գտնուած միջոցին։

Կը նկարագրեն ինծի ուխտաւորներու պաշտանքը այդ Աստուածածնին՝ որ Արմաշինն չափ հզօր դրօշ մը թողած է հաւատաւորներու սրտին վրայ, եւ անուանակիցն է անոր։

— Չարխափանը . . . ա'խ, աչքս մատաղ անոր, կ'ըսեն թաղեցի կիներ։

Իրենց համար ամէն նեղութիւն կը ցրուէր ան, չորը կը խափանէր, ու չկար վիշտ մը որ իր ամբարումը չգտնէր անոր հանդէպ։ Ուխտաւորները երբեմն խուճերով կ'երթան եղեր հոն, գտնէ շարաթ մը մնալու համար յատկապէս պատրաստուած տաղաւարներու մէջ, որոնցմէ մօխրակոյտ մը միայն մնացած է այսօր։ Ու տեսակ մը Արմաշի մանրանկարը կը պարզուի եղեր եկեղեցիին մէջ, ո'րը իր գործին յաջողութեան ակնկալու, ո'րը իր հիւանդին ստողութեան կամ ցաւագարի մը բուժումին։ Եւ անշուշտ դժուար չէ գուշակել թէ շատ հեղ սիրային դրուագներու խոստովանանքը հոն գուրս տրուած է արցունքով խառնուած, եւ թէ Աստուածածնին առջեւի քարերը ամէնէն աւելի մատաղատի աղջիկներու կամ երիտասարդ կիներու ծունկերուն պատուանդանն է որ եղած են։

Ասանք պարզ մանրամասնութիւններ են թէեւ իրենց արտաքինով, բայց ներքնապէս կը յայտնեն հաւատքի՝ մշտահոս աղբիւր մը՝ որուն դնացքը ամէն հինգշաբթի եւ կարգ մը տաղաւարներու դէպի Գարակէօմրիւկ կ'ուղղուէր։ Իրենց բովանդակ պայմանագրական հանգամանքին հակառակ՝ այդ պաշտամունքի արտայայտութեանց մէջ կեղծիքը չէ՝ որ երեւան պիտի դար հոգեբանական քննութեամբ

մը։ Ընդհակառակը, ամէնէն պարզ ու ամէնէն կոյր հաւատքներէն մէկն է տրորուած բոլոր այն ջերմեանդ ցոյցերուն գուր որոնց նման օրինակ ուխտավայրեր առարկայ կը դառնան. ժողովուրդը որ հոն կը փութայ, ուխտը անհրաժեշտ պէտք մը ու միեւնոյն ատեն զօրավիգ մը կը նկատէ իրեն, ճիշդ ինչպէս որ հացին պէտքը պիտի զգար անօթութեան հանդէպ։ Եւ ահա ճիշտ ատոր համար է որ այսօր անմիջական կարգադրութիւն մը հարկեցուցիչ կը դառնայ Չարխափանին համար, զոր կարելի է առժամեայ մատուռի մը մէջ ամբիօթել, — ճիշտ ինչպէս որ եղաւ երկրաշարժէն ետքը, — մինչեւ որ եկեղեցիին շինութիւնը աւարտի։


Պատկերը պէտք չէ ուրիշ տեղ փոխադրել. առանց անոր Գարակէօմրիւկի պզտիկ հայ գաղութը, — որ այսօր 25-30 տուն կը համրէ թէեւ՝ բայց կրնայ վաղը աւելի ստուարանալ, — գոյութենէ պիտի դադրի, որովհետեւ ընտանիքները տակաւ պիտի հեռանան անկէ՝ հաստատուելու համար Պոլսոյ կեդրոնին աւելի մօտաւոր վայրերու մէջ։ Եւ եթէ նոյն իսկ այդ պարագան ալ չըլլար, հրաշագործ պատկերի մը եւ անոր կապուած ուխտին տարրեր տեղ փոխադրուիլը բան մը պիտի պակսեցնէր այն հաւատքէն՝ որ հաւատաւոր սրտեր կըլծած է անոր։ Ուխտերուն հետ ուխտատեղիները միակ տարր մը կը կազմեն ժողովրդային հաւատքին մէջ, եւ միշտ ցուրտ արգիւնք մը առաջ կուգայ անոնց իրարմէ բաժնուէլէն։ Երեւակայեցէ՛ք Մշոյ Ա. Կարապետի ուխտը փոխադրուած Մարգուան եւ կամ Արմաշի Չարխափանը մօտակայ քաղաքներէն մէկը։ Կը կարծէ՞ք որ նոր ուխտավայր մը անվթար պահէ ժողովուրդին հաւատքը որ ուխտին սրբութեան չափ ալ ուխտավայրին նուիրականութեան կը հաւտայ։ Տեսած եմ Մեծ Արմաշի ուխտաւորներ՝ որոնք նոյն իսկ Աստուածածնայ պատկերին հանդէպ ուխտատեղիին անունին է որ կ'ուղղեն իրենց աղաչանքը՝ «Ա'խ, սուրբ Արմաշ»։ Միեւնոյնը բոլոր տեղերու ուխտավայրերուն համար, եւ նոյն իսկ Գարակէօմրիւկի եկեղեցւոյն «Պզտիկ Արմաշ» յորջորջումը շատ բան չի՝ զգացներ այս տեսակէտով։

Թո՛ղ պատկերը վերահաստատուի հոն եւ
ամէնէն տարէց պառաւն անգամ սիրով եւ
շատ աւելի հաւատքով պիտի ուզէ լարձրաւ-
նալ Դարակէօմբիւկի դժուար ճամբէն քան թէ
ուրիշ աւելի մօտաւոր ու հանգստաւէտ տեղէ

մը : Որովհետեւ , ուխտաւորը իր ուխտին
կատարմանը մէջ որչա՛փ նեղութիւն քաշէ ,
այնչա՛փ աւելի յոյս կ'ունենայ անոր ընդուն-
ուելուն :

ՄԻՐՍԷՏԷՍ

ԱՂՋԻԿՆ ՈՒ ՊԵՐԷՏԸ



Ա Ղ Ջ Ի Կ Ն

— «Աղջիկ մ'եմ ես հետաքրքիր ,

Այլ աղջրկանց ո՛չ նրման,

Սիրելի, սիրուիլ չեմ փափաքիր,

Ո՛չ ալ երգ, պար, քօմբլիման:

Ձեմ ուզեր որ, բրնիկ, օտար,

Չափահասն ու պատանին,

Հանին ինձ, և, դեմս անդադար

Խունկ, մոմ վառել հոգ տանին:

Ձեմ մրտածեր ժիր ամուսին,

Տիկին ըլլալ, կազմել տուն.

Չաւակներով՝ որոնք խօսին

Թո՛ւնոյ նրման ոստոստուն:

Ձեմ փափաքիր որ խինդ ու խաղ

Հեշտիւ օրրեն իմ օրեր.

Ապրիմ անհոգ, անվիշտ, խաղաղ,

Տափալութեամբ մ'աններեր:

Հոգիս միայն կուգէ փքքիլ

— Հոգիս՝ լեղուն ծարաւի —

Համն առնելով կաքիլ կաքիլ

Նախատանաց, սճւր ցաւի:

Կուգեմ որ շատ, շատ ցաւ ըզգամ,

Բարոյական քիբտ տանջանք.

Եւ չը կրնամ, զէք մէկ անգամ,

Բերնէս հանել հառաջանք:

Կուգեմ ձայն մ'որ, անձայն ապտակ,

Աղեյօշոշ չար ժանիք,

Ուրանայ զանկ ու լանջիս տակ՝

Ինչ որ կայ լաւ արժանիք:

Այցելութեան, սքրան, սեղան,

Թատրոնն ըլլամ թէ փողոց,

Դիւիւս խրրատք, խայրուածք տեղան,

Սիրտըս կտրեն գերիլ սրդոց:

Եւ զոյգ մ'աչեր, չար, միշտ արբուն,

Քննեն շարժուածքս ու քայլեր,

Թուին բսել. «Անկիրք մ'ես դուն,

Նստար, ելար, չէր վալլեր...»

Ձաղկեն զիս իբր ըստորնացած,
Ցեղով, ոսկւով ալ աղքատ.
Եւ չը կրնամ հիշով մ'իսկ ցած
Յայտնել տրտունջ կամ գանգատ:

Կ'ուզեմ որ կամքս ալ խորտակի.
Ձանձրոյթն ալ ծանր ու տափակ
Ջիս պաշարե շուրջանակի
Որմի մը պէս ամբափակ:

Եւ վառի սիրտս, հրդեհի յար
Անարգանաց կայծակէն.
Եւ արիւնի, լայ վշտահար,
Սուր սուր փուշեր գայն ծակէն:

Կ'ուզեմ որ միտքս յորջորջուի միշտ
Յոյլ, անմըշակ ու տընաս,
Դեմքս՝ անշընորհ, աչքս՝ ամպարիշտ,
Անձս՝ ընտանի պատուհաս...:

Կ'ուզեմ ըզգալ կսկիծն հրգօր
Կսկիծն անհուն, անսահման,
Լուռ, անտրտունջ, հանապազօր
Սրտին, հոգւոյն քայքայման ...:

Ա՛հ, քնը ընեմ, ըսէ, պրեւտ,
Որ երկնից տակ լուսավառ,
Հընար չըլլայ գտնել յաւետ
Էակ մ'ինձ ջափ հեգ, թըշուառ...»

Պ Ը Ի Է Տ Ը

— «Կ'ուզեմ ճանչնալ, աղջիկ յիմար,
Գողգոթայի ցից ճամբան...
Միջոց մը կայ քեզի համար,
Միակ, ըստոյգ, անխափան:

Ամուսնացիր, երիկ մ'առ դու,
Եւ թող, լեզուաւ սայրասուր,
Սիրտն՝ անգորով, դեմքը թըբու
Միշտ հետդ ապրի մի ԿԵՍՈՒՐ . . . »

ԱԼՓԱՍԵԱՆ



ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԸ

«Ո՛վ կար, որ հասկնար ու ըսէր ան վերելի Կապուտիկ Աստծուն (1) գործերը: Գարունն երբ աշունին տէրիւնքն էր մնացեր, կգնիկ մի ամառ չ'արցունց գետինը: Հիմայ որ աշնան ցանքը կայ, գիւղացին կարճ էրկան իր տարեկան աշխատութիւնը պիտի խծպէ, լեռ, լանճ ծով կը դառնայ»:

Այս մեր ալ աս Բուիկ Տէտէին գունդ գունդ միջմիջութիւնները, գեղին մէջ միայն ինքն ու ինքն է որ, քուն արթուն վիճակին մէջ, երկնուց վրայ միշտ, ներշնչուողի մը խեւ խոհուն արտայայտութիւնով, երկինքի երեւոյթներուն վրայ կը ժառէ պակները:

Իրկունները կ'ըսեն, անգամ մի անկողին մտնելէ առաջ կը կախուի կը մնայ երկինքէն, անգամ մը գիշերը կէսին տառնները կը կենայ ոտքի վրայ, հեղ մըն ալ, մարդս լուսաւորացի պահուն դուրս կուգայ առքին տկէն, աչք կը պաշտպանէ ամպերու աշխարհքը, կը հայի, կը փնտառէ, ինքնիրեն հետ խօսողի շարժումները կ'ընէ: Կը հայի հեռուն, մինչեւ աննշմար հորիզոնին ծէրուրտիքը: Բուիկ անկէ վերջն է որ իր հմայեկները կը բաշխէ: Ամպերը հոն չըլլողորի սարերուն վրայ կուտակուեր են (արեւմուտք), վաղը, ըսել է, ողորմութիւն պիտի թորայ: ամպերը ծովուց ջուրը խմել իջեր են (հարաւ), նշան մըն ալ այս, որ վաղուան անձրեւները ընդհատ տարափները պիտի ըլլան, թէ՛ արեւելքէն, կամ՝ արեւելեան հարաւէն վազող հովերը գետինը կը շորցնեն, հիւսիսի քամին ջինջ պարզեղ մը կ'ապահովէ: Վերջապիտի ամպերը հիւսիսայգի կարմիրով — արեւը վաղը ետին պիտի հայի, բայց որ մը պիտի ըլլայ ըսել է:

Վաղորդայնի թափառկոտ մութիկը — մը-

շուշը, յաջորդ օրուան չփոթ երեւոյթներուն արհաւիրտ նախանշանը կ'ընդունի: Ու յետոյ ամպերու տեսակ մը՝ տիւրաւ, ուկաղճի գոյնով, թուխ ու կապարի գոյնով ամպերը, զատ զատ, եղանակին համեմատ մանաւանդ, այս մեր գեղի Գաղիմիա Պապաին համար թարմ թաց համաւ մը կ'ապահովեն: Բուիկ լսաւ, Բուիկը կ'ըսէ, երէկ ըսած է, այսօր ալ նոյնը կը պնդէ, թէ՛ լուսինն բակը, գիշերի լոյսերուն շատ ցոլքտուն պալպաջը, ցորեկի տժգոյն, նսեմ ոլորտը, բոլոր ասոնք ապահովարար բարի անձրեւներու — ողորմութեան նշան ըսել են: Բուիկ լսայ, ինչչափ երկինքէն, այնչափ մըն ալ երկրի վրայ անց դարձ բրած բաներէն գիտէ, իր մատ մը լեզուին վրայ թանկագին մագաղաթի մը խնկոտ պատմութիւնները միացուեր են, որոնք սակայն աւելի պակաս չահեկանութիւնով, այնքան յաճախ բսեր կրկներ է քովիններուն, շատ աւելի իրմով հետաքրքրուող պիսեկներուն (2), որ շատերուն համար անակընկալ ոչինչ մնացեր է անոնցմէ:

Հին տանուէր մը պիտի հասկնայիք Տէտէն, զաւկի տէր, մալի բոզակի տէր երբեմն, գեղին գործերը, էրիկ կնիկի հեռքն ու անհամաձայնութիւնը, ժամու տէրտէրէն մինչեւ դաշտի ջրգուորներուն (3) թնճուկ, թքոտ գանգատները իր առջեւէն կ'անցնէին ու ինք այդ բոլորը հաշտ ու հեշտուկ միջոցներով իրարու հետ դուրեւ կարեւու կենցաղի խելքովը, յարգանքի տեսակ մի սուղ ակնածանքը ծնցուցեր էր գեղի ամբողջին մէջ: Հիմայ — հիմայ իրաւ որ մարդուն բանը Աստծու մնացեր է, անցած, անհետացած մեղու՝ փեթակի մը ամայութիւնը կայ իր բոլոր-

(1) Աստծու վրայ կապուտիկ մակդիրը, շատ լուսած է գեղացիին բերնէն: Ժամկատի ընտանիքէն անուն մըն ալ այդ կապուտիկը չըլլար:

(2) Հասակակից:

(3) Արտը, էգին ջրող մշակները:

քը, իր մէջն ալ, որ անջուր հորին մէջ խեղդուողի տպաւորութիւնը կը թողու իրեն հանգիստը ու պահ մը իր ինչն ու ինչպէսը հասկնալ ուղղովն վրայ: Հին ունեւորէն բան մը երբեք չէ մնացեր հիմայ ոչ իսկ մարդակ մը բշխակէն, որ աչքին դէմ լռնէ, անով երէկն յիշէ ու գոնէ տրտմանուչ երնէկով մը լեցնէ հոգին: Տունը քաղքի պարտքնաէրեւրէն կը գրաւուի օր մը, հողի, ջրի պէս հաւրասութիւն հովցուքի⁽⁴⁾ մը պէս կ'անցնի, տղաքը երկուք-երեք ամէնքն ալ կարգուի, ո՛չ ինքը, ոչ ալ գուռ գրացին մը կրցաւ գիտնալ թէ՛ ս'ըր գացին: Այդ պանդխտացածներուն վրայ, հարսներն ալ, դեռ հարսնիքի քողքերնին գլխընին, թողին պինքը ու մէկիկ մէկիկ մարանց երգերուն տակ գացին:

* * *

Բուրիկ կեանքը անկէ վերջը տառապանքով խարստած կեանք մը կը դառնայ, տարին ի բուն ասոր անոր տանը բակին ու ձմեռն ալ շատ բութ օրերուն, ախոռն ու մուրնեւրուն վրայ կը քաշքուտէ ինքզինքը, աչքն էլ ին ձեռքէն չի գտներ, կըսպասէ որ շերտ մը հացը կատուի կերութեանէն աւելցած, ու դգալ մըն ալ տաքէն⁽⁵⁾ պաղէն, իր ամբողջ շարժումն սնունդը ըլլին:

Միտը պարտկող լաթեղէնը՝ շապիկ, բաճկոնակ, քղիկ⁽⁶⁾, վրային չեն գար: Տուեր են, ողորմեր են, բայց ա'լ հայոցը ո՛վ, թէ՛ այդ գօտին, այդ գղիկը, խեղճ մարդուն լէնքին, երկայնքին չը վայլու, կամ անոր խաղտիկէ մարմնին ձոյլը չի ծածկող բաներ կ'ըլլան. գոմշուկին կոնակը պէպէքի շապիկը անցուած, կամ ահագին բարտին՝ ձեռք մը թաշկինակով ծածկելու փորձն եղած: Բայց վերջապէս ինքն ալ ընդունած ու հաւտըցած է որ հասարակաց խոջին ու քմայքին մնացած մըն է, մուրացիկ մը ըսել կուզուի, որ պիտի տանէ, որ պիտի կլլէ, որ պիտի մարսէ, ինչ որ այդ հասարակութիւն ըս-

ուածը կամք բնէ, բան մըն ալ իրեն բաժին հանէ:

Հագնի չի հագնի, կամ ուտէ ալ չուտէ ալ, աս է իր հագածին տեսակն ու ամբողջութիւնը, հացն ալ, ան չոր հացը միայն, որ կուտան իրեն, չէ՛ այն բարութիւնով, որ մարդը ապրի. կուտան որ՝ ամպերէն անդին Յիսուս Քրիստոսի մայրը՝ մեր բոլորիս ալ մայրիկը, հայթուիս՝ տանտիկին մը եղած է քննծօր⁽⁷⁾, ասիէ բրդոնին⁽⁸⁾ փոխարէն հաւրարարութիւ մը խլեն, զգալ մը փրկան ալ հարկաւ զատ պահանջ, Թո՛իկ այս վիճակով ամառէն ձմեռը կը ճամբորդէ. ձիւնը կը դափնէ բոպիկ սաքովը, ձիւնը երեսին ու կուրծքին վրայ կը հալի միշտ, ու անգամ մըն ալ գէպի ամառ, այդ ոտքերը անգամ մըն ալ ամառն լոյծ փոշին մէջէն կը քաշքշէ, այդ փոշին լոյծ ու տաք ալ, որ գիտէք թէ՛ հաւիթիւ կը խաշէ եւ սրուն խշխիշ⁽⁹⁾ տաքին, կ'ընեն, ուղտին ներբանն ալ չի դիմանար:

Բայց ա'լ ինչպէս, ինչո՞ւ պիտի սպրէր, ատի հեղ մըն ալ իրեն հարցնէիք: Տարիքը իրաւ որ տարիքն է ան հինօրի ուսենիին, որ ճամբուն վրայ հոն, իր աղկաղկ, նիհարուկ տտերովը ճուկճուկ կ'ըլլի ու կը գերեկնայ հովերուն, որ ա'լ չի մօտենան իրեն, վերջին տերեւ մը, մորճ մը դոնէ գոյութեան նշան թողուն:

Տարիներու այս բեռն տակ, ութսունն անցուկ շատունց, հարիւրին մօտեցած՝ մաղ, մօրուք, ունքերն ու մինչեւ աչքին թարթիչները բոց պիտակը հագած կերեւան ա'լ: Ձի լսեր շատ, աչքին մէկն ալ վրայ տուած այն դէպքով, որ օր մը մութին մէջէն իր խշտին գտնելու խարխուրը կ'ընէ, ցիցի մը կը գտնուի, աջ աչքը պիտի ըլլայ, ագ պահուն խաղողի պտուղի մը պէս կը պատուի:

Այդ մարմինին, սպկայն, կեանքը այդ ցաւերով զմուռը դնող, սպրողին համար, մէկ աչքն ալ իստական չէ՞ր կ'ընէք, երկուքով ինչ ունէր տեսնելիք, աշխարհք, մարդիկ ինչ համ լերին իր բերնին, իր հոգուն,

(4) Գուռն մը երկուք զով ջուր, զոր կը խառնեն լոգնայու ատեն շատ տաքցուած եւ ջրին մէջ, բարեխառնուածեան մը համար:

(5) Տաք կամ պողպատեղի:

(6) Սալթա կ'ըսեն Թուրքերը:

(7) Իրի Թէ:

(8) Պղտիկ պատառ հացի:

(9) Տաքին բարձր աստիճանը:

որոնց անուշ տեսքէն չուզէր անցնիլ . պտ ա-
րեւն ալ աղէ՞կ կ'ընէ , որ ուր երկնայ , հոն
լոյս ու շարուեղ կը մէյնէ . շատ անգամ ի՞նչ
պէտք կար սա արեւ ցորեկին ու ան լուսիկ
գիշերին :

* * *

Բամպքաղի շարաթն է հիմայ , միտքս կու
գայ որ այս Բուիկ Տէտէն ինքն ալ կար-
կըտնուկ տուրուկ մը ուսն ի վար ձգած , գե-
ղին աս կամ ան կողմը քաղի ելլող բազմա-
թեան մէջ կ'երեւար : Կերթար , կ'երեւար ,
կաղակուրտէր , բայց չիտակ չէ՞ որ դժբաղդ
ծնած մարդը՝ ո՛ւր ալ երթայ , կակուղ բամ-
պակին արտին մէջ ալ , հոն նորէն իրեն հա-
մար կակուղ , փափուկը , անուշ խօսքին ու
ընդունեւթեան փշուրը գոնէ բաժին չի հան-
ուիր :

Ծերունին միւս կէնձ քաղութորներուն հետ
ատենին տեղ չի կրնար ժմեղ , գործի գլուխը
ուշ հասնողն է , այդ պատճառով ու անոնց-
մով ալ որ խողան խճէճէն չի կրնար զատել
կ'ընեն , շատ դանդաղ կը շարժի , կամ բնա-
ջի բանիւր ու յաճախ արգելք մըն ալ միւս բան-
ուորներուն , իր երկար անվերջ հէքեաթնե-
րովը , որ՝ արեւցթուն կը սկսի ու իրկունը՝
արեւմտուն գեւ ծայրը չի հանկուրցեր : Հարս,
աղջիկ , մէջ-կնիկներն ⁽¹⁰⁾ ալ բերուրին բաց
իրեն մօտիկ կ'ընեն , ասոնք իրկունը՝ ծրած
երեսով , մաղը գլխուն , քսով ճեւեկ կուզեն :
Սանկ շարք մը ահա պատճառներ , որով ո՛ւր
երթայ , ո՛ւր հողաէրի ալ դիմէ , մարդով , միջ-

(10) Միշակ տարիքով :

նորդով մուտք ինդրէ արտին մէջ , կը քչեն
կը քչեն ինչպէս չղած եւ մը որ ջրբոսին կա-
նանջը կուրէ :

* * *

Անցած ամառը , չեմ յիշեր ո՛ր օր , ոտքս
անգամ մըն ալ այն գեղը կ'իյնայ . Ս. Դա-
ւիթ բժիշկ սուրբ մըն է այդ գեղին մէջ .
փոքրիկ Զաւէնս անոր ոտքը տարած էի ,
որ հաղէն դադրի : Կիսափուլ պատի մը տակ,
այն տեղ , գզուած մազերով ճմլած տղեկ
մը՝ Ալքերէն փսխում թէ՛ Շվոտէն ծեծ-
ուած՝ աչքիս կը հանդիպի , որ բայ ու փե-
տատ ձեռքը կտոր կտոր բաներ մը կը հանէ
հողէն ու խաղողի մեծ կակ կթոցի մը մէջ
կը տեղաւորէ :

Տղեկը անտարբեր իր ըրածին , ոչ իսկ
աճապարողի երեւոյթով , կթոցը լեցնելուն կը
հայի , ի՞նչ է սա , կ'ըսեմ , աղա՛յ , ի՞նչ է
կ'ընես , միեւնոյն անտարբեր արտայայտու-
թիւնով : Տէտէիս մարմինն է , կը պատաս-
խանէ , սպառ փաւ , տակը մնաց , աս աղ-
բերուն մէջ . պահ մըն ալ տանիմ որ գերեզ-
մնոցը պառկի :

Ու ծերունիին այս մոռցուած թուռիկը իր
ամբողջ տէտէն սակաւին մէջ զետեղելով , կը
շալկէ զայն թեթեւ սուպակի մը պէս , օ՛ֆ
մը միայն ու մօտ ճամբէ մը գերեզմանին դին
կ'անցնի : Բուիկ դժբաղդ ծնած արդէն , կը
հաւտայլ՝ք , որ անոր վերջին տեղը գոնէ
երջանիկ հանգստարան մը ըլլար :

Թ. Լ. ԱՍՏԻՆՑԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ

ԺԱՆՏԱՆՏՆ ՈՒ ԿՐՈՂԸ

Ժանտախտին այժմէութիւնը կը թեւադրէ
ինձի քանի մը հարեւանցի զխտողութիւններ
ընել ժողովրդային անէժծքի մէկ քանի բանա-
ձեւերուն վրայ որոնք անյիշատակ ժամանակ-
ներու մէջ այդ ահաւոր ախտին մեզի ալ ը-
րած այցելութիւններուն միակ ու յետին յի-

շատակն են , պահուած ժողովրդեան բերնին
մէջ :

Գաւառներու մէջ սովորական անէժծքներ
են կրո՞ղ , կրողը քանի , կրող եղի , եւ այլն :
Կրող կամ գրողի մասին — զորս ոմանք ի-
րարմէ կը զանազանեն — մեր ժողովրդեան
հին ըմբռնումը կամ հաւատքը յայտնի է եւ

այդ ըմբռնումով կը մեկնուի կրողը ճանի ձեւը, բայց կրող եղին կը մնայ անբացատրելի՝ եթէ չհամեմատենք զայն նմանօրինակ մահ եղի, խշխշուկ եղի անէծքներուն հետ որոնք նոյնպէս մեր գաւառացի մամիկներու բերին համբիշն են։ Մահ բառը գաւառաբարբառներու մէջ սովորական մահը չի նշանակեր շատ անգամ, այլ մահաբեր համաճարակ մը, եւ աւելի անձուկ խմատով՝ ժանտախտը կամ բուն իսկ անոր յատուկ մահաբեր այտուցքը։ Մահ եղի անէծքին մէջ ուրիմն մահը կ'ախարհէ ժանտախտաւորներու մարմնոյն վրայ եղած այդ այտուցքը։ Ինչպէս նաեւ խշխշուկ եղի ձեւին մէջ ալ միեւնոյն խմատը կ'ուտայ խշխշուկ բառը որ ապահովարար բուն իսկ ժանտախտին այտուցքը նշանակող մասնաւոր բառ մըն է եւ որուն բայն ալ, խշխշալ ձեւով, ծանօթ է Պոլսոյ եւ ուրիշ տեղերու բարբառներուն։ Կը հասկըցուի ուրիմն թէ կրող եղի ձեւին մէջ ալ կրողը պարզապէս ժանտախտը կամ անոր յատուկ այտուցքը կը նշանակէ եւ այսպէսով՝ անձնաւորեալ կրողի հին բմբռնումը կը շփոթուի հիւանդութեան մը գաղափարին հետ։ Այս շփոթութիւնն ալ իր պատճառն ունի սակայն։

Նախնական ժամանակներէ ի վեր մարդիկ անձնաւորած են մահը, ինչպէս կեանքի ու բնութեան բոլոր խորհրդաւոր ու անբացատրելի երեւոյթները, ատոնց մէջ կարծելով տեսնել գերնական էութիւններու ներգործութիւնը։ Յունական միթաբանութեան կեանքի թելը կտրող Պարկան ու մեր Կրողը նոյն պաշտօնն ունին ժողովրդական հաւատալեաց մէջ։ Կրողի միւթսը դարէ դար ինչ այլակերպութիւններ ալ կրած ըլլայ, գէթ էն վերջին ժողովրդական ըմբռնումով ան պարզապէս մահուան ոգին կը ներկայացնէր, ինչ որ կ'ապացուցանեն ժողովրդական կարգ մը ասացումներ։ զոր օրինակ՝ երբ մէկը կարգ մը վտանգներէ ու մահափոխ հիւանդութիւններէ անմիտ աղատած կամ արկածալից կեանք մը անցուցած ըլլայ, ժողովուրդը անանկին համար կ'ըսէ թէ «կրողին

սուգրակին ընկած է» (—ազատած է)։ Այս ասացումը որոշ կը ցուցնէ ժողովրդեան հաւատքը կրողի մասին։ Կրողը ճանի, կրողին ճալ խօսքերն ալ նոյնը կը ցուցնեն։ Այս այսպէս ըլլալով՝ ժողովուրդը մահուան մէջ անձնաւորեալ կրողի մը գերին վրայ ունեցած հաւատքէն շարժուած՝ ի հարկէ ժանտախտին մէջ ալ պիտի տեսնէր մի'եւնոյն չարաշուք կրողը։ Անկէ՝ ժանտախտին գաղափարը նոյնացած է կրողին հետ։

Մեր ժողովուրդը կրողի մասին ալ բան մը չգիտեր հիմա եւ եթէ վերը յիշուած քանի մը անէծքներն ու ասացումներն ալ չըլլային՝ բուն իսկ ջնջուած պիտի ըլլար իր լեզուէն։ Սակայն կրողը թէ եւ մոռցուած՝ բայց հին հաւատքը ջնջուած չէ ժողովրդեան մըտքէն։ Այսօրուան մեր մամիկներուն հաւատացած հոգիաւոր մի'եւնոյն կրողն է, մարդոց հոգիները տապալի մէջ ժողովող ու քանդող կրողը։ Հոգիաւոր քիչ մը քրիստոնէացած գաղափարն է կրողին։ Կրողը չար ոգի մըն էր։ Հոգիաւոր հրեշտակ մըն է։ Գերթողին «տժգոյն մահու հրեշտակը» բանաստեղծական յղացում մը չէ լոկ, մեր ժողովուրդը կը հաւատայ հոգիաւոր հրեշտակի մը։ Եւ մեր եկեղեցիներուն մէջ տեսած եմ Աւետարանի անմիտ հարուստին պատկերը որուն անկողին գլխուն վերեւ անկուած է ահարկաւ հրեշտակ մը՝ նիզակ ի ձեռնին՝ անոր հոգին «պահանջելու» համար, Աւետարանի բառով։ Հոգէաւոր հրեշտակի գաղափարը կը յայտնուի նաեւ ժողովրդական հէքեաթներու մէջ ալ։ Այս մասին հին ու նոր աղգերու հաւատալիքներուն վրայ բաղդատական ուսումնասիրութիւն մը շատ հետաքրքրական պիտի ըլլար, որքան անհունապէս կարեւոր աղգագրական տեսակէտով։

Իրաւունք ունինք կրկնելու թէ ժողովրդական լեզուն մեր նախնեաց ասէնէն թանկ կագին ու նուիրական կտակն է մեզի՝ որուն մէջէն, ուշադիր հետազոտողներ գեւ կարող են երեւան բերել լեզուարանական եւ աղգագրական շատ աւելի կարեւոր գիւտեր։

ՅՈՒՂ. ԳԱԶԱՆՃԱՆ

“ԱՐԵՒՄԱՄՈՒԼ” ԵՒ “ՄԱՍԻՍ”

—>—<—

Այստա պայքարը, զոր Կարապետ Ստեփանեան անուն անձը կը փորձէ մղել Մասիսին, անոր խմբագրին ու գլխաւոր աշխատակիցներուն դէմ, անտարբեր կը թողու զմեզ ամէնքս: Եթէ Աւուրջ պայքարը ու Պասասխանատուութեան քաժինը գրեցի, նպատակս ո՛չ թէ պատասխանել էր մարդու մը որուն անունը առաջին անգամ կը լսէի, եւ որուն գրածները արհամարհոտ ծիծաղ մը չարժեքէ՛ ուրիշ բանի չեն ծառայեր, այլ զրահանութեան ու լրագրութեան հետ առնչութիւն ունեցող հարցի մը վրայ կարճ տեսութիւն մը ընել, — եւ այս՝ որովհետեւ Արեւելեան Մամուլի պէս Հանդէս մը անուղղակի կերպով առիթ կուտար այդ հարցին քրքուելուն: Այս անգամ, մեր Իգմիրի պաշտօնակիցը հինգ էջ կը դնէ դարձեալ միեւնոյն Ստեփանեանին տրամադրութեան ներքեւ, խելքին չիչա՞ծ բոլոր այլանդակութիւնները դուրս տալու, զրգուած մանաւանդ սա պարագայէն թէ իր գոյութիւնը կ'անդրադարձնուի եղբ. ու քիչ կը մնայ որ ծննդեան վկայականն ալ հրատարակութեան տայ, հաստատելու համար թէ ինքը «fantastique մի անձ» չէ: Աւելորդ յոգնութիւն. իր «յինելը կամ չլինելը» միեւնոյն բանն է ինծի համար. նոյն իսկ եթէ դեռ քսան յոգնած դիմէ իրարու վրայ, նոյն ողորմելիութիւններով լիցուն:

Կէտ մը կայ սակայն, որուն վրայ կը սեւեռի ուղարկութիւնս, այն է Արեւ. Մամուլի խմբագրութեան հիւրընկալութիւնը գիւրացընող մտածումը՝ գրուածքի մը նկատմամբ որ ծայրէ ծայր անձնականութիւն եւ կիրք կը հոտի: Ինչպէս արդէն առիթ ունեցայ ըսելու, թերթի մը խմբագրութեան կողմէ լրութիւն պահուիլը — հայհոյակց յոգնածի մը շուրջը մանաւանդ — բուական չէ զայն արդարացնելու կամ չէզոք նկատել տալու: Արդ, որովհետեւ Կարապետ Ստեփանեանի այս անգամուան հրէշակերտին երկու երրորդ մասը ուղղակի իմ անձիս դէմ — իրեւ հրա-

պարտկազիր — ուղղուած յարձակումներու կոյտ մըն է, բոլոր համեստութեանս հակառակ՝ կը հարկադրուիմ՝ հրատարակութեան տալու դեռ երկու ամիս առաջ Արեւ. Մամուլի մեծ այսրգ Տնօրէն-Խմբագրատեմին կողմէ նուաստիս ուղղուած սա նամակը, իբրեւ առաջին եւ վերջին ըսելիքս միեւնոյն Արեւ. Մամուլի մէջ երկու ամիս ետքը՝ անծանօթ անձի մը կողմէ ինծի դէմ հրատարակուածներուն:

ՊՌԻՃԱ, 16 Մայիս 1900

Տիգրան Արփիարեան

Խմբագիր Մասիսի

Կ. Պոլիս

Ազնիւ բարեկամ,

Ձեր 7/20 ապրիլ քուակիր պատուական նամակն, մեր բարեկամ Պ. Որբեքեանի ձեռօք, ժամանակին ստացայ քեւ, բայց շատ կը ցաւիմ որ առողջական վիճակս նորէն խանգարուելուն, անմիջապէս չկրցայ պասասխանը գրել: Ուսի յաւկապէս խնդրելով որ ներուամիս գտնուիք այս ակամայ զանցաւորեանս համար, վստահ եղիք որ ձեր նամակն այնքան աւելի գոհունակութիւն եւ ուրախութիւն պատճառեց ինձ, որքան որ արտայայտուած ընթիւ ու ազնիւ զգացմունքն անկեղծ բարեկամի մը սրէն կ'ըլլին, բարեկամ մ'որ անձնապէս ու հրապարակաւ իր առ իս ունեցած համակրութեան փորձերն շատ պարագաներու մէջ, եւ մասնաւորապէս յոբեւանիս առթիւ ցոյց տուած է, իր կոկիկ ու զգայուն գրչով:

Այս ալեւոր հասակիս մէջ՝ քեւ յիշողութիւնս մերք ինձ անհաւատարիմ կ'գտնուի, եւ այս ալ բարիք մ'է անախորժ վերլիւններու նկատմամբ, սակայն չեմ մոռնար այն ազնուախոհ հոգիներն որ իրենց կենաց ներքին ու հրապարակային շրջաններուն մէջ, միշտ ուղիղ ու արդարաւոր ընթացք մը պա-

հաճ եւ իրենց անձին ու պաշտօնին պատիւ բերած են :

Այս անձերու կարգէն եւ եւ դուք , ազնիւ բարեկամ , եւ իրաւամբ կը վայելէք հասարակութեան յարգն ու համարումն : Շարունակեցէք ուրեմն անվհաս ձեր խմբագրական ու գրագիտական պաշտօնը յօգուտ հանրութեան եւ պատկառելի Մասիսին (որու ստորոքն ես ալ երբեմն ցորենի հասիկ մը նետած եմ) , իսկ զիրենց որու կոչուած է :

Ձեր խնդիրն՝ իմ առաջին հրատարակութեան մասին , արդարեւ յօժարամիտ եմ կատարելու , սակայն մէկ կողմէ ձեր ակնկալութիւնն ի դերեւ հանելու երկիւղս , միւս կողմէ հիւանդութիւնս ընդհատ միջոցներ թոյլ չեն տաւ ինձ կատարել փափաք մ'որ բերելս այսուհետեւ ալ ապագամ երեւի :

Սիրով եւ յարգանքով

Մնամ Ձերդ

Մ. ՄԱՄԱՌԻՐԵԱՆ

Կարագետ Ստեփանեան անուն անձը կրնայ չարունակել այսուհետեւ իր տօն-քիչութեան յարձակումները անձիս դէմ , տխմար բառախաղերով ու կեղտոտ բացատրութիւններով խճողուած : Որքան ատեն որ Արեւ. Մանուշը ըլլայ այդ գրուածքները հիւրընկալող թերթը , անոր Տնօրէն-Խմբագրատնիս այս նամակը միանգամ ընդ միշտ կ'ազատէ զիս՝ այդ շեմ գիտեր ո՛ւր տեղէն թաւած հակառակորդովս զրազելու տաղտկալի հարկէն , — բան մը որուն համար նոյնքան շնորհապարտ պիտի մնամ Մամուրեան էֆէնտիին որքան շնորհապարտ եմ՝ իր մէկ կրտսեր պաշտօնակցին նկատմամբ արտայայտած բարի զգացումներուն համար :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ

Ուրճայի դպրոցներուն վրայ սա տեղեկութիւնները կը հաղորդէ մեզ մեր թղթակիցը յուլիս 1 թուականով .

Արդարութիւնը խօսած ըլլալու համար եթէ ըսեմ թէ դպրոցական օրինաւոր տեսական դրութիւն՝ 4-5 տարիէ ի վեր միայն է որ կը տեսնեն տեղւոյս Հայերը , անշուշտ միեւնոյն ատեն մատնացոյց բրած կըլլամ՝ բարերար դերը դպրոցի անունով եղած այն նիւթական նպատին , որու շնորհիւ կրցած են քիչ չափ բարեկարգ դրութեան տակ կազմակերպուիլ մեր ու մեզի հետ համերաշխարար ընթացող Հայ-Բողոքականներու վարժարանները :

Աղքատութեան տարիներու մէջ քրիստոնէական կարեկցութեամբ հաս աչցելով Քէմպրիճի ուսուցիչներէ մէկին՝ հեղահամայնութիւնը , Հարիսի առժամայէս յատկացուցած՝ նպատին կը պարտինք յիշուած կրթական բարիքը , որ հացի ու հագուստի բարիքէն վար չմնար՝

բանի որ «ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ» :

Բարերար նպատատունն որ՝ — ինչպէս գործնականօրէն հաստատուած է՝ — իր ամէն առաքինի ձեռնարկներուն մէջ իրեն ստատարող ու գործակից ունի իր ազնիւ Տիկինը , թէեւ դադրեցնելու ժամանակն եկած՝ բայց անցեալ տարեշրջանին ալ հաճած էր իր կրթական նպատը զրկել՝ իմանալով որ երաշտութեան ու սղութեան երեսին նիւթապէս նեղուած ծնողքներ տակաւին չպիտի կրնային ինքնին հոգալ իրենց դպրոցները :

Յառաջիկայ՝ նոր տարեշրջանին համար՝ նպատի յոյս մը չկար : Սակայն վերջերս գուցէ իմացուեցաւ որ ազնիւ նուիրատուն՝ այս տարի ալ բացառարար ուրիշ բարերարներէ հայթայթելով կը խրկէ կրթական նպատ մը , մասնաւորապէս այն պատճառաւ որ վերջերս՝ մեր ազգայինք Մայր եկեղեցիի շինութեան առթիւ կարեւոր զոհողութեանց դիմագրուելու կոչուած ըլլալով , նորէն անկարող

պիտի գտնուին տեղական վարժարանները ինքնին նոյն բարեկարգութեամբ շարունակելու :

Պէրպլեքեան վարժարանի ամսվերջի հանգէսին վրայ գրեցինք նախորդ թիւով : Այդ կրթական բարեկարգ ու արդիւնաւոր հաստատութիւնը այս տարի ունեցեր է ինր շըրջանաւարտ, ամէնքն ալ Պոլսեցի, որոնք ստացեր են իրենց վկայականները : Ասոնցմով վարժարանին շրջանաւարտներուն թիւը կ'ըլլայ 135 :

Գաւառային նպաստընկալ վարժարաններու եւ որբանոցներու մասին երկու առաջարկ ներկայացուց նպաստից Յանձնաժողովի վերջին նիստին մէջ անոր անդամներէն Բարթոլէֆ. Թէլեան : Ա. Ուսմանց ծրագրիւր պարզագոյն ձեւի մը վերածել, քանի որ այդ դպրոցներէն ելլող աշակերտներու մեծագոյն մասը իրենց ծննդավայրին մէջ գլխաւորաբար հոգաւորութեամբ զբաղելու սահմանուած են : Բ. Որովհետեւ բարեբարներու կողմէ նուիրուած եւ ծախսուած գրամներուն նպատակն է օր մը Տէրութեան եւ Ազգին օգտակար անհատներ պատրաստել, ուստի լաւագոյն է որբանոցներու եւ նպաստընկալ վարժարաններու մէջ գաւառիկացիներու ուղիով որբերէն մաս մը Պէրպլեքի բժշկական վարժարանը զրկել, նպաստից Սիսուկին ծախսով, որպէս զի օր մը բժիշկ եղած դասնան իրենց ծննդավայրը եւ օգտակար ըլլան երկրին ու Ազգին : Նոյնպէս, յառաջիկային՝ եթէ կարելութիւն կայ՝ ուրիշ ուղիով որբեր Այսմաշի Դպրեւանքը ղեկը, պատրաստուելու համար ուսուցչութեան, քահանայութեան, Գրգիւր դպրեւանքի, իրենց կողմէն համակարգելու : Յանձնաժողովը, իր երեք շաբաթի որոշումով, ատեն մէջ որ գումարուեցաւ մէկ Վարժարանը Հօր նախագահութեամբ, ընդունեց Սէրէան էֆէնդիին այս գործնական ուսումնական վարժարանը :

Կեդրոնական վարժարանին մէջ ուսուցչի պատրաստելու յատուկ դասընթացքի մը հաստատման համար Ուսումն. Խորհուրդը եւ Ղալաթիոյ Խնամակալութիւնը շարժուաւ մէջ դարձեալ գումարուեցան Ստեփան Բաշայի նախագահութեամբ եւ պատրաստուած ծրագրով ընդունելի դատեցին : Տարակարծիք կը մնան միայն սա կէտին վրայ թէ Բաշա գող ուսուցիչներն ալ հետեւին բացուելիք դասարանի դասընթացքներուն, ինչպէս կ'առաջարկէ Ուսումն. Խորհուրդը :

Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանին տարեկան քննութիւնները կատարուեր են նախորդ շարթուն : Այս տարի միայն 9 ընթացաւարտ պիտի ունենայ վարժարանը : Անոնց տեղ գաւառներէն նոր աշակերտներ պիտի ընդունուին :

“ՄԱՍԻՍ, Ի ՆԱՄԱԿԱՏՈՒՓԸ

Մ. Վ. (Արաքիտ) — Մասիսի այդ մէկ օրինակը ուղղակի Այն զրկել սկսանք : Արաքիտի բաժանորդները թող ներողամիտ ըլլան. առաջին 4 Թիւերը բոլորովին սպառած են :

Մ. Փ. (Թօզաք) — Ուսումնասիրութիւնը, զոր կ'առաջարկէք հրատարակել Մասիսի մէջ, շատ երկար է ու չի յարմարիր մեր ծրագրին, որքան ալ լուրջ գործ մը եղած ըլլայ : Հաւատոյն չէ առանձին հատորիկ մը կազմել : Կը շնորհաւորենք «մատենագրութեան մասնագէտ» վկայականը զոր ընդունած էք Ուսումն. Խորհուրդէն :

Ս. Մ. (Պրուսա) — Շնորհակալութիւն ձեր հոգածութեան համար : Գանձեցինք Միւս բաժանորդին ընկալագիրը կը խրկենք :

Մ. Տ. (Սամսուն) — Այն անձը որ պիտի բերէք ձեր բաժանորդագիրը, դեռ չներկայացաւ խմբագրատուն : Հասցէն կրնայք խմսցնել :

Մ. Բ. (Սամսուն) — Ստացանք ի հաշիւ ձեր բաժանորդագրութեան :

Ս. Թ. (Ուրֆա) — Գրուածքնիդ շատ կրօնական է. մեզի չի յարմարիր :

Վ. Տ. (Սեքասիա) — Ստացանք նամակնիդ, Մասիսները պիտի շարունակէք ընդունիլ կանոնաւորապէս : 1904 թիւը զրկուեցաւ :

Մ. Վ. Թ. Յ. (Մարգուս) — Ուսման որ գրելու մարմաշնիդ չենք մեղադրեր միայն թէ այս երկրորդ փորձերնիդ ալ յաջողած չէ եւ միեւնոյն պատասխանը տալու հարկին մէջ կը գտնուինք :

Ս. Թ. (Պերսի) — Եթէ յաջողինք գտնել հատ մը Թիւ 1 Մասիսէն, կը խրկենք :

Ս. Մ. (Իսթեմ) — Ստացանք ձեր պատասխանը : Կը շարունակենք խրկել :

Յ. Ս. (Սեւանիկ) — Գանձեցինք երկու բաժանորդագիրները :

Յ. Մ. (Հիւսնիսմանուր) — Մասիսները զրկուեցան յունիս 1 Թիւէն սկսեալ : Վեցամսեայ բաժանորդագրութիւն չունինք :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. Ս. Տ. Թ. Ե. Ո. Ս. Ս. Ն.

Կ. Պոլիս, Ֆինանսընլար եօգուշու, Թիւ 27

ԱՐԵՒԵԼՔ, Թ. 4367-4372: Աջ ու ձախ.
«Թարգմանութիւններ» . Արամ Անտոնեան .
— «Ոչինչին օգտակարութիւնը» . Նոյն : —
Առեւտրական տեսութիւն . Ա. Գ. — Կենսա-
գրութիւն Տանիշ Էֆէնտի . Ա. Յ. Այվազեան .
— Կարծուած սխալներ . Տ. Հաճեան : — Թուրք
բանաստեղծութիւն «Լէյլա Հանըմ» . Ս. Թա.
պախեան : Նամակներ Ռուսաստանից . Արեւ
Ապրեւեանց : — Ընդհ. պատմութեան ուսու-
ցումը . Ա. Ա. Սուրենեան : — Վարժապետա-
նոցը . Զ. Ե. — Սանատարեան վարժարան .
Նորայր : — Դպրեվանքի քրոնիկ . Նոսար :

ՍՈՒՐԸԱՆԴԱԿ, Թ. 413-418: Եկեղեցա-
կաններու ապրուստը . Զարմայր : — Միշտ
նոյն յանկերգը . Նոյն : — Յետոտ պատիւը
(Իրական պատմութիւն) . Լ. Շաքրեան : —
Ողբերգութիւն թէ զաւեշտ . Լիւնիֆ . — Վա-
ճառականութիւն . Նոյն : — Ո՛վ է պատաս-
խանատուն . Նոյն : — Սրբուհի մայրապետ
Գալֆայեան (պատկերովը մէկտեղ) : — Կա-
նանց եւ տղայոց յատուկ թերթերու պէտքը .
Գ. Յակոբեան : — Անտեղի դանգատներ . Մ.
Նաղպանսեան : — Իզմիրի առեւտուրը . Յ. Մեր-
նիկեան : — Պոլսոյ թաղերը . Այցեւոր մը : —
Նոր գիտութիւն մը . Մանկախօսութիւն Բ.
Ոսկերիջեան :

Սուրհանդակի տարեկան բաժանորդագինն
է 75 զրշ : Գաւառներու համար՝ 100 զրշ :
Զեռքէ կը ծախուի հատը 10 փարայի :

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ, Թ. 1137-1142: Բրոնիկ
Իզմիրի . Գ. Խորասանճեան : — Պաղեստինի
լուրեր . Խ. Գանգաշեան : — Զինաստան . Գ.
Խաչիկեց : — Նամակ Ռուսմանիայէն : — Զէյ-
թունի հայ եկեղեցիները . Գ. Գաւապեան :
— Դթութեան յարկն ի Պրուսա : — Քիչ մը
գիտական . Ժիրայր Շիրակացի : — Միջազ-
գային կացութիւնը . Ի՞նչ կ'անցնի կը դառ-
նայ . Բիզանդ Բեշեան : — Մուշէն Պիթլիզ .
Բարգէն վրդ. : — Ուղեւորի նօթեր . Ալեքսա-
րան :

Կ. Ս. ԻԻԹԻԻԾԵԱՆԻ Թարգմանութիւննե-
րէն հետեւեալները կը գտնուին Պոլսոյ բոլոր
գրադաճատներուն քով : Կեդրոնատեղի Պաղ-
տատեան Գրատուն :

Թափառական Հրեայ , 4 հատոր , 50 զրշ :
— Ընթանեցուրդ , 2 հատոր 12 զրշ : — Կար-
միր մարդոց երդումը , 2 հատոր 10 զրշ : —
Բարիքի ամուսնութիւնները , 1 հատոր 5 զրշ :
— Սկզբունք քաղաքական ճեշտութեան , 1
հատոր 4 զրշ : — Առնիին ճեշտութիւն կամ
ճնարարութիւն , 1 հատոր 4 զրշ :

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏՐՔ Ս. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ 396

(Եաննի գարեջրասան վրայի յարկը , ճիշդ Զրպուհեանց դէմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենաստատիկ ցաւած աղաները մեկ ան-
գամեւ կը լեցնեն . ցաւով դիմելու եւ բուժուած վերադարձուաւ պայմանաւ :

Նորահար եղանակաւ , նուրբ , ճաշակաւոր եւ գիմացկուն արհեստական աղաներ կը
պատրաստեն , յար եւ նման բնականի , դիմի անաւորութիւն ըստ արիֆի , ծանոթութիւն
եւ ազատ արտասանութիւն երաշխաւորուած :

Բերնի հիւանդութիւնք կատարելագոյն կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղե-
րու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ , առանց ցաւի ատամնահանութիւն :

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (մինչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (մինչեւ
կես գիշեր) հիւանդ կ'ընդունին :

Ծանօթ . — Պոլսոյ կողմը մանածիկ ԶՈՒՆԻՆՔ :

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻՒՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան գրամատուհն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն

Սիւնն եֆ. Քաշսէրէան

Կենաց ճիւղին տնօրէն

Միհրան եֆ. Տէր Ներսէսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահտապուրուն խան
Օսմ. Պանքայի գէմ :

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՋ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

(Թիւ 27 ՖԵՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ)

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ

ՀԻՄՆԵԱԼ 1853 ԻՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Կազմատունը իր ստացած նոր բարեփոխմամբ կը ներկայանայ Պաս. Հրասարակչաց, Դրավանառաց, Թրդրավանառաց եւ Արգոյ Հասարակութեան իբր առաջին կարգի հաստատութիւն մը՝ հաւասար Եւրոպիոյ ամենէն լաւ կազմասանց : Նորագոյն եւ կատարելագործեալ շոգեառ մեքենաներու յաւելմամբ՝ գործատուս կարող է, մեր մեջ եղած ամեն ուրիշ կազմատունէն աւելի՝ շատ եւ աւելի՝ արագ գործ արտադրել, միեւնոյն ժամանակ վստահացունելով իրեն դիմողները թէ՛ Յ. Մատթէոսեանի արտադրութիւնք ԱՄԵՆ ՄՐՅՈՒՄԷ՛ ՎԵՐ ԵՆ թէ ապրանաց լաւութեան եւ թէ աշխատութեան խնամքի կողմէ :

Ասոր լաւագոյն ապացոյցն է երկար տարիներէ ի վեր այս Տան վայելած համբաւը :

Կ'ընդունուին ամեն կարգի յանձնարարութիւնք եւ Պատուարժան յանախորդ վստահ կրնան ըլլալ թէ ամենափոքր յանձնարարութիւնք իսկ ամենակարեւորին հաւասար՝ նոյն հոգածու խնամքը կը ստանայ :

Դիմելու շափաւորութեան մասին պզտիկ փորձով մը համոզուիլը լաւագոյն է :



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա.ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ դանձուած ապահովագրիւններ

34,775,642 Փրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Քարափին վրայ, Մասսասան հին տեղը

Ընդհ. Քննիչ

Ա. ՀԻՒՐՄԻԻՋ

Ընդհ. Դորձակալ

ԹԷՈՏՈՐ ՌԷԲԲԷՆ